

«Ա.Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն»
Գեղարքունիքի տարածաշրջանային մասնաճյուղ



ՄԱՍՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ա Պ Ր Ի Լ

2022 թ.

29.04.2022

«Աշխատող ընտանիքից էր». ծառայակցի կողմից արձակված կրակոցից մահացած Սամվել Սանեյանը Ծովագյուղից էր

Նախնական տվյալով՝ ծառայակցի կողմից արձակված կրակոցից մահացու հրազենային վիրավորում ստացած պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Սամվել Սանեյանը Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ համայնքից էր:

Դեռ մեկ տարին չէր լրացել, ինչ Սամվելը ծառայում էր բանակում: 2021թ.-ի հուլիսին էր զորակոչվել բանակ, իսկ մինչ այդ սովորել էր Ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարանի միջին մասնագիտության կրթության քոլեջում՝ որպես շինարար-ինժեներ:

«Խելոք, աշխատող ընտանիքից էր, շինարար մարդիկ են: Սամվելը ընտանիքի երրորդ զավակն էր. երկու քույր, երկու եղբայր են», – NEWS.am-ի հետ զրույցում ասաց Ծովագյուղի բնակիչը:

Հիշեցնենք՝ ապրիլի 28-ին՝ ժամը 19:20-ի սահմանում, նախնական տվյալով՝ համաճառայակցի կողմից արձակված կրակոցից հրազենային վիրավորում է ստացել ՀՀ ՊՆ N զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Սամվել Սեդրակի Սանոյանը (ծնվ.՝ 2002թ.):

Հիվանդանոց տեղափոխելու ճանապարհին շարքային Սամվել Սանեյանը մահացել է: Տարվում է քննություն՝ դեպքի հանգամանքները լիարժեք պարզելու համար:

<https://news.am/arm/news/699162.html>

29.04.2022

Ծովագյուղ և Մեմյոնովկա գյուղերն ավելի քան 4 ամիս է՝ վարչական ղեկավարներ չունեն. համայնքներն անորոշ կարգավիճակում են. «Ժողովուրդ»

«Ժողովուրդ» օրաթերթը գրում է. «Ծովագյուղի գյուղապետարանի գործունեությունը արդեն չորս ամիս է՝ պարալիզացված է: Նշենք, որ անորոշ կարգավիճակում է ոչ միայն Ծովագյուղը, այլև Մեմյոնովկա համայնքը: Այսինքն՝ ավելի քան 4 ամիս է, ինչ այս գյուղերը վարչական ղեկավարներ չունեն:

«Վարչատարածքային բաժանման մասին» օրենքի փոփոխությունների համաձայն՝ ղեկտեմբերի 5-ի ընտրություններից հետո Սևանին միացան տասը գյուղեր, այդ թվում՝ Ծովագյուղն ու Մեմյոնովկան: Նշենք, որ այս գյուղերի բնակիչները մեկ մարդու նման չէին մասնակցել ղեկտեմբերի 5-ին կայացած ՏԻՄ ընտրություններին, քանի որ դեմ են համայնքների միացմանը, խոշորացմանը: Ի նշան բողոքի՝ ծովագյուղցիները պարբերաբար փողոց են փակում:

Ծովագյուղի գյուղապետ Վահան Գևորգյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նկատեց, որ իրենց գյուղի ճակատագիրը շարունակում է անհայտ մնալ: Նա նշեց, որ ն՝ Մեմյոնովկայի, ն՝ Ծովագյուղի բնակիչները ցանկանում են միավորվել իրար, այլ ոչ թե Սևան համայնքին: Թե ինչ հույսեր ունեն ծովագյուղցիները, հայտնի չէ, բայց ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը բազմաթիվ անգամ հայտարարել է, որ **իրավաբանորեն այդ երկու գյուղերը խոշորացվել են և ներառված են Սևան համայնքի մեջ**:

<https://www.7or.am/am/news/view/236290/>

27.04.2022

Գավառում հիմնվում է «Գավառի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոն

ԳԱՎԱՌ, 27 ԱՊՐԻԼԻ,
ԱՐՄԵՆՊՐԵՍ:

Գեղարքունիքի
մարզկենտրոն Գավառ
քաղաքում ընթացքի մեջ են
գտնվում «Գավառի
երիտասարդների տուն» բաց
երիտասարդական
կենտրոնի շինարարական
աշխատանքները:

Ինչպես «Արմենպրես»-ին
տեղեկացրին Գավառի
համայնքապետարանի
աշխատակազմից, այն



Գավառում հիմնվում է «Գյումրու երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ -ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի Հայաստանյան գրասենյակի և Գավառի համայնքապետարանի կողմից կնքված եռակողմ հուշագրի շրջանակներում: Շինարարական աշխատանքներն իրականացվում են նախաձեռնող կողմերի և Գավառի համայնքապետարանի ֆինանսավորմամբ: «Գյումրու երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ -ի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի Հայաստանյան գրասենյակի Ֆինանսավորմամբ կատարվում է շենքի ներսի շինարարությունը, իսկ դիմալին հատվածն ու բակային մասը վերանորոգվում է Գավառի համայնքապետարանի կողմից: Այս նպատակով Գավառի համայնքապետարանի կողմից հատկացվել է շուրջ 30 միլիոն դրամ: «Գավառի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնը գործելու է Գավառի Սայաթյան -95 հասցեում, թիվ 3 մանկապարտեզի հարևանությամբ:

«Կենտրոնի նպատակն է՝ բարձրացնել Գավառ համայնքի բնակավայրերի երիտասարդների քաղաքացիական ակտիվությունն ու բարեկեցությունը՝ երիտասարդական աշխատանքի իրականացման միջոցով: Կենտրոնը համայնքահեն ծառայություններ է տրամադրելու դեռահասներին և երիտասարդներին», - ներկայացրեց Գավառ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Գրիգոր Դաշտոյանը:

Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանը, տեղակալների ուղեկցությամբ, վերջերս աշխատանքային շրջայց է կատարել «Գավառի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոն, դիտարկել շինարարական աշխատանքների ընթացքը:

Խոսրով Խլղաթյան

<https://armenpress.am/arm/news/1081771/>

27.04.2022

«ԳեոՊրոՄայնինգ» 100 մլն դրամ է տրամադրել Վարդենիսի տարածաշրջանում իրականացվող սուբվենցիոն ծրագրերին

«ԳեոՊրոՄայնինգ» ընկերությունը հայտարարում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի տարածաշրջանի համայնքների զարգացման երկրորդ սուբվենցիոն ծրագրի համաֆինանսավորման ավարտի մասին: Այս մասին նշվել է «ԳՊՄ Գոլդ» ընկերության գլխավոր տնօրեն Անատոլի Գոգոտինը Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի հետ հանդիպման ժամանակ:

79 մլն դրամ արժողությամբ նախագծային աշխատանքների շրջանակում «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ընկերության համաֆինանսավորման գումարը ծրագրի երկրորդ փուլում կազմել է 50 մլն դրամ: Ծրագրի շրջանակում լուծվել են ընկերության ներկայության տարածաշրջանի սոցիալական ոլորտի մի շարք խնդիրներ, մասնավորապես, Գեղամասար համայնքի մի շարք գյուղերի զագամատակարարման, ջրամատակարարման, գյուղական փողոցների լուսավորության ցանցերի զարգացման խնդիրները և այլն:

Առաջին սուբվենցիոն ծրագրի շրջանակում ընկերությունը Վարդենիս համայնքին տրամադրել է 50 մլն դրամի օգնություն: 2020-21 թթ վերակառուցվել և բարեկարգվել են մի քանի փողոցներ, ինչպես նաև Վարդենիս քաղաքի կենտրոնական այգին:

Կողմերը քննարկել են նաև ընկերության կողմից մարզում գործող Սոթքի հանքավայրի վերակազմավորմանն ուղղված ներդրումային ծրագրերը: «ԳՊՄ Գոլդի» ղեկավարությունը մարզպետին ծանոթացրել է մի շարք սոցիալական ծրագրերի հետ և քննարկել այս ոլորտում համագործակցության հեռանկարները:

«ԳեոՊրոՄայնինգ Գոլդի» Գլխավոր տնօրեն Անատոլի Գոգոտին. «ԳեոՊրոՄայնինգ Գոլդը» սոցիալական զարգացման հարցերում պատասխանատու ընկերություն է: Մենք միշտ փորձում ենք հնարավորինս շատ ներդրումներ կատարել սոցիալական ենթակառուցվածքների և մարդասիրական ծրագրերի զարգացման գործում: Մեր սոցիալական ծրագրերը, որոնք մշակվել են տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցությամբ, ծառայում են քաղաքացիների կենսամակարդակի բարելավմանը, նրանց բարեկեցությանը»:

Գեղարքունիքի մարզպետարանի և «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ընկերության համագործակցության ձեռքբերումներին և հեռանկարներին անդրադարձավ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը:

«Ի դեմս «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ընկերության՝ մենք ունենք լավ ընկեր և գործընկեր , ով ակտիվորեն ներգրավված է Վարդենիս խոշորացված համայնքի կյանքում և երկար տարիներ մասնակցում է սոցիալական զարգացման ծրագրերին: Գործընկերության առաջին փուլում մենք զգալիորեն բարելավեցինք Վարդենիս քաղաքի սոցիալական ենթակառուցվածքները և այժմ շարունակում ենք ծրագրերը այլ ենթակառուցվածքների զարգացման համար, որտեղ մեր գործընկերը ևս ակտիվ մասնակցություն ունի: Մենք լավագույնս տեղեկացված ենք բոլոր այն բարեգործական ներդրումներին, որոնք կատարվել են մեր մարզում ձեր ընկերության կողմից, ինչի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը և վստահեցնում, որ այսուհետ ևս պահպանելու և զարգացնելու ենք համագործակցությունը: Մարզպետարանը պատրաստ է

աջակցել այն բոլոր խնդիրների կարգավորմանը, որոնք կարող են ի հայտ գալ ձեր ընկերության կողմից կազմակերպվող ծրագրերի իրականացման ընթացքում»:

Հիշեցնենք, որ «ԳեոՊրոՄայնինգ» ընկերությունների խումբը Հայաստանի խոշորագույն արդյունաբերական ներդրողներից մեկը, երկրում գործում է արդեն 15 տարի: Խմբի հայկական ակտիվներն են՝ Սոթի ոսկու հանքը, Արարատի ոսկու կորզման ֆաբրիկան և Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը: Գործունեության 15 տարիների ընթացքում խումբը ավելի քան 400 միլիոն ԱՄՆ դոլար է ներդրել իր հայկական ձեռնարկությունների արդիականացման համար: Ներկայության տարածաշրջանների զարգացման գործում Խմբի սոցիալական ներդրումների ծավալը գերազանցում է 15 մլն ԱՄՆ դոլարը:

<https://news.am/arm/news/698748.html>

25.04.2022

Ապօրինի զենք-զինամթերքի կամավոր հանձնումներ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության ստորաբաժանումներում

Ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության և ենթակա ստորաբաժանումների ծառայողների արդյունավետ բացատրական աշխատանքի արդյունքում արձանագրվել են ապօրինի զենք-զինամթերքի կամավոր հանձնման դեպքեր: Մասնավորապես, մարզային վարչության քրեական հետախույզների բացատրական աշխատանքի շնորհիվ Գավառի բնակիչներից մեկը կամավոր հանձնել է թմրուկավոր ատրճանակ ու զինամթերք:

Բացատրական աշխատանք են իրականացրել նաև Վարդենիսի բաժնի քրեական հետախույզները, արդյունքը՝ «Կալաշնիկովի» ինքնաձիգ ու զինամթերք, իսկ հերթապահ մասի ծառայողների բացատրական աշխատանքի շնորհիվ «Կարաբին» հրացանի և զինամթերքի: Մարտունու բաժնի քրեական հետախույզների, համայնքային ոստիկանների և անչափահասների գործերով ծառայողների բացատրական աշխատանքի շնորհիվ էլ բաժնում արձանագրվել են «Կալաշնիկովի» ինքնաձիգի, ականանետի, հրացանի և ռազմամթերքի կամավոր հանձնման դեպքեր:

«Կալաշնիկովի» ինքնաձիգի և հրացանի կամավոր հանձնման դեպքեր են արձանագրվել նաև Գավառի բաժնում՝ շնորհիվ բաժնի համայնքային ոստիկանների և անչափահասների գործերով ծառայողների բացատրական աշխատանքի: «Կալաշնիկովի» ինքնաձիգի և ռազմամթերքի կամավոր հանձնման առումով արդյունավետ էր նաև Ճամբարակի ոստիկանների իրականացրած բացատրական աշխատանքը: Սևանի ոստիկանների բացատրական աշխատանքի շնորհիվ էլ բաժնում արձանագրվել են ինքնաշեն ատրճանակի և ռազմամթերքի կամավոր հանձնման դեպքեր: Նշանակվել են փորձաքնություններ: Հորդորում ենք ապօրինի զենք-զինամթերքը կամավոր հանձնել ոստիկանություն՝ քրեական պատասխանատվությունից խուսափելու համար:

<https://168.am/2022/04/25/1687225.html>

23.04.2022

Համայնքների միավորման նոր նախագիծ է շրջանառության մեջ դրել. «Ժողովուրդ»

«Ժողովուրդ» օրաթերթը գրում է. «Նախկին իշխանություններին մերժող Հայաստանի ներկայիս կառավարությունը մտադիր է շարունակել համայնքների խոշորացման ծրագիրը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը համայնքների միավորման նոր նախագիծ է շրջանառության մեջ դրել: Նախատեսվում է իրականացնել համայնքների միավորման 5 ծրագիր Արագածոտնի մարզի Թալին, Գեղարքունիքի մարզի Ճամբարակ, Լոռու մարզի Ալավերդի, Տաշիր, Սյունիքի մարզի Միսիան համայնքային փնջերում: Այսինքն՝ առաջարկվող ծրագրերում ներգրավված են լինելու թվով 13 համայնք, 141 բնակավայր, որոնց միավորման արդյունքում ձևավորվելու է թվով 5 համայնք:

Ըստ գործադիրի՝ 2018, 2019, 2021 թվականներին համայնքների միավորման թեմայով անցկացված հանրային քննարկումների ընթացքում բնակչության մեծամասնությունը հակված է եղել համայնքների միավորման «շրջանային» մոդելին, բայց դա՝ ըստ կառավարության, իսկ գյուղերում դժգոհ են, անգամ օրինակ են բերում 2016-17 թվականներին խոշորացած համայնքները և փաստում, որ ոչ մի օգուտ էլ չեն ունեցել: Մեզ հայտնի դարձավ, որ Արագածոտնի մարզի Թալին համայնքի մեջ կներառվի 34, Գեղարքունիքի Ճամբարակում՝ 19, Լոռու մարզի Ալավերդիում՝ 28 բնակավայր: Տեղեկացնենք, որ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող վարչատարածքային բարեփոխումների ծրագիրը մեկնարկել է 2015 թվականի օգոստոսից, նախատեսված է ավարտել այս տարվա հունիսի 30-ին: Ծրագրի ընդհանուր արժեքը 9.39 մլն դոլար է, որից 8.6 միլիոնը դրամաշնորհն է, իսկ 786 հազար դոլարը ներդրվելու է համայնքների կողմից»:

<https://www.pastinfo.am/hy/news/2022/04/23/qtl42eyde/1385514>

21.04.2022

Սևանի ափամերձ տարածքներում աճող անտառների ճահճացած հատվածների մաքրումն ավելի արդյունավետ կկազմակերպվի

Գեղարքունիքի մարզում տեղի ունեցավ Եվրոպական միության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության կողմից համատեղ ֆինանսավորմամբ իրականացվող, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Սևանա լճի շրջակա միջավայրի պահպանություն» (EU4Sevan) ծրագրի և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից համատեղ իրականացվող «Գետերի ափամերձ տարածքների վերականգնում Հայաստանում» ՔՈՎԻԴ-19-ի արձագանքման ծրագրի (ԷԿՈսերվ ծրագիր) շրջանակներում իրականացվող «Պատասխանատու եմ Սևանի համար» 3-րդ միջոցառումը:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Աննա Մազմանյանը, Հայաստանում ԵՄ պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավար Ֆրանկ Հեսը,

ԳՄՀՀ հայաստանյան գրասենյակի տնօրեն Մադլեն Ռաուշենբերգերը, Հայաստանում ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ Նաթիա Նացվլիշվիլին, Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, EU4Sevan ծրագրի ղեկավար Քրիստիան Հենշելը, ՄԱԶԾ կլիմայի, շրջակա միջավայրի, կայունության թիմի ղեկավար Հովհաննես Ղազարյանը, ինչպես նաև այլ պաշտոնյաներ, շահագրգիռ կողմեր և համայնքի բնակիչներ:

Աննա Մազմանյանը նշեց, որ «Սևանա լճի շրջակա միջավայրի պահպանություն» ծրագիրը բարձրացնում է հասարակության իրազեկվածությունը մեր բնական ժառանգության, Հայաստանի քաղցրահամ ջրի և հիդրոէներգիայի կարևորագույն աղբյուր Սևանա լճի կարևորության և հիմնախնդիրների վերաբերյալ:

Ֆրանկ Հեսը ողջունեց մասնակիցներին և նշեց.

«Սևանա լճի էկոհամակարգի պահպանումը ԵՄ-ն Հայաստանի համար բնապահպանական առաջնային խնդիրներից է: Իսկ EU4Sevan ծրագիրը միավորում է տարբեր հանրությանն ու տարբեր կառույցներին, որպեսզի վերջիններս համատեղ աշխատեն խնդիրների լուծումների վրա և բարելավեն շրջակա միջավայրի կառավարումը: Գեղարքունիքի մարզպետարանում ծրագրի մարզային գրասենյակի բացումը կնպաստի համատեղ ծրագրի իրականացմանը: Այն նպատակաուղղված է բարելավելու ծրագրի հաղորդակցությունը, ինչպես նաև համախմբելու մարդկանց»:

Մասնակիցների առաջին կանգառը Վարդենիկ համայնքում էր, որտեղ «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչը ներկայացրեց նոր ձեռք բերված անիվավոր բեռնիչը և ընդգծեց տրամադրված տեխնիկայի կարևորությունը գետերի ափամերձ տարածքների մաքրման աշխատանքները արդյունավետ կազմակերպելու գործում:

ՄԱԶԾ-ն տրամադրել է մեկ միավոր տեխնիկա (անիվավոր բեռնիչ) «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ին՝ համապատասխան վերապատրաստմամբ: Գործընկերների կարողությունների հզորացումը առանցքային է ծրագրի կողմից համատեղ ձեռք բերված արդյունքների կայունությունն ապահովելու համար:

Շրջակա միջավայրի նախարարությանը ցուցաբերված տեխնիկական աջակցությունը՝ Սևան ազգային պարկին մեքենայի տրամադրման միջոցով կամրապնդի պարկի կարողությունները: Այն կօգնի հաղթահարել ներքին կառավարման մարտահրավերները և ավելի արդյունավետ կազմակերպել ափամերձ տարածքներում աճող անտառների ճահճացած հատվածների մաքրումը՝ կանխելով լճի հետագա օրգանական աղտոտումը:

Միջոցառումը շարունակվեց Գեղարքունիքի մարզպետարանում, որտեղ տեղի ունեցավ EU4Sevan-ի Գավառի մասնաճյուղի պաշտոնական բացումը ու EU4Sevan ծրագրի և մարզպետարանի միջև համագործակցության հուշագրի ստորագրման արարողությունը: Մարզային գրասենյակը կնպաստի թիրախային խմբերի, շահառուների, գործընկերների, համայնքների միջև հասանելիությանը:

<https://www.1lurer.am/hy/2022/04/21Սևանի-ափամերձ-տարածքներում-աճող-անտառների-ճահճացած-հատվածների-մաքրում-ավելի-արդյունավետ-կկազմակերպ/706680>

20.04.2022

«Վարդենիսի տարածքում է». Հակոբ Միկոյան

«Աղբ թափելն ամոթ է» նախաձեռնության հեղինակ Հակոբ Միկոյանը ֆեյսբուքյան իր էջում գրել է.



«Հողը չի ներում:

Քանի դեռ հողը աղտոտված է, երկրում ոչ մի լավ փոփոխություններ մի սպասեք: Ինքնակազմակերպվեք, սկսեք մաքրապատել ամեն մեկդ ձեր տարածքում: Հ. Գ. Տեսանյութերի ու նկարների պակաս չունեն: Օրական տասնյակ աղտոտված տարածքների նկարներ ու վիդեոներ են ուղարկում ինձ: Այս տեսանյութում պատկերվածը Վարդենիսի տարածքում է:

Հայաստանը սիրելու երկիր է, ապացուցիր քո սերը: Միացիր մեեզ ձեր բակում»:

<https://m.mamul.am/am/news/237734/p1>

19.04.2022

Սևանա լճի մակարդակն ապրիլին բարձրացել է 2 սանտիմետրով

2022 թվականի ապրիլ ամսի առաջին 18 օրերի ընթացքում Սևանա լճի մակարդակը բարձրացել է 2 սանտիմետրով՝ 1900 մետր 46 սանտիմետր նիշից հասնելով 1900 մետր 48 սանտիմետր նիշին:

Ինչպես տեղեկացրին ՀՀ ԱԲՆ «Հայիդրոմետ» ծառայությունից՝ 2022 թվականի ապրիլի 18-ի դրությամբ Սեւանա լիճը ծովի մակերեսույթից գտնվել է 1900 մետր 48 սանտիմետր բարձրության վրա, որը, սակայն, 22 սանտիմետրով ցածր է մնում նախորդ տարվա նույն օրվա նիշից: Այս տարվա հունվարից մինչև ապրիլի 18-ն ընկած ժամանակահատվածում Արփա-Սեւան թունելային ջրատարով, ներառյալ ստորերկրյա հոսքը, Սևանա լիճ է տեղափոխվել 41 միլիոն 547 հազար խորանարդ մետր ջուր: Սեւան թափվող գետերում դիտվել է ջրի էլքերի որոշակի ավելացում:

<https://b24.am/other/315554.html>

18.04.2022

44-օրյա պատերազմի մասնակիցներն ու նրանց հարազատները մասնակցում են վեբ ծրագրավորման դասընթացների

«Գյումրիի Տեղեկատվական Տեխնոլոգիաների Կենտրոն» գիտակրթական հիմնադրամը, համագործակցելով «Զինվորի մայր» ՀԿ-ի հետ, իրականացնում է վեբ ծրագրավորման դասընթացներ՝ 44-օրյա Արցախյան պատերազմի մասնակիցների, պատերազմում զոհված զինվորների ընտանիքի անդամների և պատերազմի հետևանքով տուժած անձանց համար:

Գյումրիի Տեղեկատվական Տեխնոլոգիաների Կենտրոնից NEWS.am-ին հայտնում են, որ ապրիլի 12-ին Գեղարքունիքի մարզի Ճամբարակի համայնքապետարանում տեղի ունեցավ «Տեխնոլոգիական հմտությունների տրամադրում արցախյան պատերազմի հետևանքով տուժած անձանց Ճամբարակ քաղաքում» ծրագրի պաշտոնական բացումը:

«Գյումրիի Տեղեկատվական Տեխնոլոգիաների Կենտրոն» գիտակրթական հիմնադրամի տնօրեն Ամալյա Եղոյանի խոսքով, ծրագրին, որի նպատակն է տեխնոլոգիական և բիզնես հմտությունների տրամադրման միջոցով Ճամբարակ համայնքում պատերազմի հետևանքով տուժած խմբերի շրջանակներում նվազեցնել գործազրկությունը և բարձրացնել կյանքի որակը, դիմել է 50-ից ավելի շահառու: Դասընթացը կվարի Հայաստանի ոլորտի լավագույն մասնագետներից մեկը:

Ծրագիրն անցկացվում է Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կողմից հայտարարված «Ճգնաժամի հասցեագրում» դրամաշնորհային նախաձեռնության շրջանակներում, որն իր հերթին իրականացվում է Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող «Հանրային մասնակցություն, կարողությունների զարգացում և ճգնաժամի հասցեագրում» ծրագրի շրջանակներում:

<https://news.am/arm/news/697074.html>

18.04.2022

Հայաստանում սեփական բնակչության կարիքների համար արտադրվող պարենն ընդամենը կես տարի է բավարարում. փորձագետ

Հայաստանում սեփական բնակչության կարիքների համար արտադրվող պարենն ընդամենը կես տարի է բավարարում: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում ասաց **ՀՅԴ Բյուրոյի տնտեսական հետազոտությունների գրասենյակի պատասխանատու, տնտեսագետ Սուրեն Պարսյանը:**

Նա պարզաբանեց, որ պարենային ապրանքների ինքնապահովման մակարդակը կազմում է մոտ 56 տոկոս, և այս ցուցանիշը կարող է ավելի ցածր լինել:

Պարսյանը հիշեցրեց, որ 2020թ. ճգնաժամային տարի դարձավ Հայաստանի տնտեսության, մասնավորապես՝ գյուղատնտեսության համար՝ համավարակի և 44-օրյա պատերազմի ֆոնին, որը լուրջ ազդեցություն ունեցավ նաև պարենային անվտանգության վրա, քանի որ կրճատվեցին գյուղատնտեսական նշանակության հողերը, այդ թվում՝ ցորենի, կարտոֆիլի, բանջարեղենի ցանքատարածությունները:

«Մա, ինչպես նաև անասնակերի ծավալների կրճատումը էական ազդեցություն ունեցան նաև 2021թ. իրավիճակի վրա, երբ գյուղատնտեսության ոլորտում արձանագրվեց 1,1 տոկոս անկում: Մա այն դեպքում, երբ կառավարությունը մեծ գումարներ էր հատկացրել վարկերի սուբսիդավորման համար», - հավելեց տնտեսագետը:

Նա հիշեցրեց, որ մինչ պատերազմը Հայաստանն Արցախից ստանում էր 60-70 հազար տոննա ցորեն, անասնակեր, բանջարեղեն և առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ: Երկրի գյուղատնտեսությունը տուժել է նաև Սյունիքի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի սահմանամերձ բնակավայրերում հետպատերազմյան լարվածության հետևանքով, քանի որ գյուղացիները չեն կարողացել այնտեղ հողը մշակել, ինչը հանգեցրել է արդեն Հայաստանում գյուղատնտեսական արտադրանքի կրճատմանը:

Պարսյանը բացատրեց, որ Ռուսաստանի և Ուկրաինայի միջև հակամարտության ֆոնին այս տարի ամբողջ աշխարհում, այդ թվում՝ Հայաստանում պարենային ոլորտի խնդիրների սրացում է սպասվում:

Բուսական յուղով, հացահատիկներով, խոզի մսով, որոշ ձավարեղենով ապահովվածության հարցում Հայաստանը հիմնականում կախված է ռուսական ներմուծումից:

Տնտեսագետը պարենի դեֆիցիտ չի կանխատեսում, սակայն, ըստ նրա, գների աճ կլինի, ինչին կնպաստի նաև պարարտանյութերի գների աճը:

Փորձագետը նշեց, որ այս ամենի ֆոնին ՀՀ կառավարությունը նախ խոսում է գյուղատնտեսության ոլորտում աշխատատեղերը կրճատելու մտադրության մասին, իսկ այժմ գյուղացիներին կոչ է անում մշակել հողը:

Պարսյանը խորհուրդ տվեց կարճաժամկետ հեռանկարում դիտարկել ներմուծման ավելացումը հիմնականում Ռուսաստանից, բայց քանի որ ուկրաինական հակամարտության պայմաններում պատժամիջոցները դեռ մի քանի տարի կտևեն, պետք է մտածել նաև տեղական արտադրության հնարավորությունների մեծացման մասին:

«2021թ. ցորենի արտադրությունը 2016թ. համեմատ նվազել է շուրջ 4 անգամ, վարելահողերի 40 տոկոսը չի մշակվում: Այս խնդիրների լուծումը, ինչպես նաև բերքատվության բարձրացումը զգալիորեն կբարելավի պարենային ինքնապահովման մակարդակի հետ կապված իրավիճակը», - ասաց նա:

Այս մասով տնտեսագետը կոչ արեց լուծել ոռոգման, պարարտանյութերի հասանելիության հետ կապված խնդիրները:

«Բացի այդ, միայն վարկերի սուբսիդավորմամբ գյուղատնտեսությունը չի կարող զարգանալ: Պետք է մտածել Հայաստանից պատվերների միջոցով Արցախում հող մշակելու մասին», - ընդգծեց նա:

Պարսյանի կանխատեսումներով՝ այս տարի պարենի ոլորտում ինֆլյացիայի երկնիշ աճ կարձանագրվի: Այս ցուցանիշը 2022թ. հունվարից մարտ ընկած ժամանակահատվածում աճել է 17,8 տոկոսով:

«Աշխարհի աղքատ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, մարդիկ իրենց եկամտի մեծ մասը ծախսում են սննդի վրա: Ուստի սա մեզ համար էական նշանակություն ունի, քանի որ աղքատության մակարդակը կբարձրանա», - եզրափակեց փորձագետը:

<https://news.am/arm/news/697184.html>

11.04.2022

Սյունիքում և Գեղարքունիքում աղբբեջանական ԶՈՒ-ի տեղակայումները անհնար են դարձրել մարդկանց բնականոն կյանքը, խաթարել են անվտանգությունը. Թաթոյանը քարտեզ է հրապարակել

ՀՀ նախկին ՄԻՊ Արման Թաթոյանը ֆեյսբուքյան իր էջում գրել է. «Սյունիքում և Գեղարքունիքում աղբբեջանական անօրինական զինված տեղակայումները պատկերացնելու համար հիշեցնում եմ, թե որտեղ են նրանք՝ GOOGLE EARTH-ի **[ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՔԱՐՏԵԶ](#)**

Նրանց այս ներկայությունն արդեն իսկ մարդկանց կյանքի իրավունքի խախտում է միջազգային պահանջներով: Անհնարինության են վերածել մարդկանց բնականոն կյանքը սահմանային բնակավայրերում խաթարել են անվտանգությունը:

Այս քարտեզը 1 տարվա անդադար փաստահավաք աշխատանքների արդյունք է. աղբբեջանական [անօրինական] տեղակայումներ են, որոնք ցուցադրված են պայմանական դեղին վրաններով:

Քարտեզի նշանների տակ կան նաև իրական լուսանկար-ապացույցներ:

Կա նաև Կապանի Ներքին Հանդի ներխուժումը:

Օբյեկտիվ պատճառներով բացակայում են, այսպես կոչված, այլընտրանքային ճանապարհներին աղբբեջանական անօրինական նոր տեղակայումները, բայց դրանք նույնպես կլինեն:

Մնացած բոլոր տեղակայումները 2021թ. նոյեմբերի սկզբի դրությամբ են:

Հեռախոսով քարտեզից հնարավոր է օգտվել առանձին GOOGLE EARTH հավելվածով:

Քարտեզը կցված է հատուկ զեկույցին, որ վերաբերում է աղբբեջանական զինվորական ուժերի հետ շփման տարածքներում անվտանգության ապառազմականացված գոտու հրատապ անհրաժեշտությանը՝ հիմավորված կոնկրետ փաստերով Հայաստանի բնակչության իրավունքների պաշտպանության համար:

Քարտեզը **[կցված է զեկույցին](#)** (132 էջ):

<https://168.am/2022/04/11/1681805.html>

08.04.2022

«Մայիտակ Շորժայի» վարձակալին տրվել է կեղծ տեղեկանք. անազանգ ոստիկանությանը

Aravot.am-ի տեղեկություններով, ապրիլի 6-ին ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչությունից ստացվել է գրությունը ՀՀ քր.դատ. օր. 180-181 հոդ. սահմանված կարգով նյութեր նախապատրաստելու համար: Ըստ ՀՀ ԱԱԾ Գեղարքունիքի մարզային վարչության գրության Շողակաթ համայնքի ղեկավարը Սևանա լճի առափնյա հատվածում գործող «White Shorja» հանգստյան գոտու վարձակալ Ա. Մ.-ին 2020թ. հուլիսին տրամադրել է կեղծ տեղեկանք այն

մասին, որ նշված հանգստյան գոտին գտնվում է Շոդակաթ համայնքի վարչական տարածքում, մինչդեռ այն գտնվում է Սևան ազգային պարկի տարածքում:

Ա.Մ.-ն տեղեկանքը ներկայացրել է ՀԷՑ-ի Գեղամա մասնաճյուղ, վճարել է 203 000 դրամ «Մպիտակ Շորժա» հանգստյան գոտու էլեկտրամատակարարման ցանցը ճամբարակի էլ.ցանցի ուժերով կառուցելու համար, սակայն ըստ համապատասխան կարգի՝ վարձակալը պետք է վճարեր 846.000 դրամ, կամ ՀԷՑ-ից ստանար տեխնիկական պայմանի թույլտվություն և էլեկտրամատակարարման ցանցը կառուցեր սեփական միջոցներով:

Նախապատրաստվում են նյութեր:

<https://www.aravot.am/2022/04/08/1258858/>

06.04.2022

Ծակքարի նախկին ղեկավարին մեղադրանք է առաջադրվել համայնքին պատճառված վնասը վերականգնել է

Ծակքար համայնքի նախկին ղեկավարի կողմից կատարված չարաշահումների վերաբերյալ քրեական գործի նախաքննությունն ավարտել է ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում ավարտվել է Գեղարքունիքի մարզի Ծակքար համայնքի ղեկավարի կողմից պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, պաշտոնեական կեղծիք կատարելու, ինչպես նաև՝ համայնքապետարանի աշխատակիցների կողմից իրենց վերադասին օժանդակելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննությունը:

Մինչդեռ սակայն վարույթում իրականացված քննչական և դատավարական այլ գործողությունների արդյունքում պարզվել են մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ համայնքի ղեկավարին օժանդակողների շրջանակը, համայնքին պատճառված վնասի չափը:

Մասնավորապես՝ քննությամբ հիմնավորվել է, որ համայնքի նախկին ղեկավարը, 2002-2021թթ. ընթացքում զբաղեցնելով հիշյալ պաշտոնը, շահադիտական և անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, իր պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ, որի հետևանքով համայնքի իրավունքներին ու օրինական շահերին պատճառվել է էական վնաս, ինչն անզուգույնությամբ առաջացրել է ծանր հետևանքներ:

Փաստական տվյալների համաձայն՝ համայնքի նախկին ղեկավարը, տեղեկանալով Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի կողմից ֆինանսավորվող «էլեկտրամատակարարման հուսալիություն» ծրագրի շրջանակներում «ԲԷՑ» ՓԲ ընկերության կողմից Ծակքար համայնքում օդային հոսանքագծերի անցկացման նպատակով հողամասերի՝ առավել բարձր արժեքով ձեռք բերելու մտադրության մասին, ինչպես նաև օգտվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով նախատեսված, պետական գրանցման ժամանակ թույլ տրված սխալների ուղղման կարգով սահմանված հնարավորությունից, համաձայնության է եկել համայնքապետարանի՝ իրեն մտերիմ երեք աշխատակիցների հետ՝ վերջիններիս պատկանող հողամասերի նկատմամբ նրանց սեփականության իրավունքը գրանցելու, իսկ հետագայում դրանք առավել բարձր գնով «ԲԷՑ» ՓԲԸ-ին վաճառելուն իրեն օժանդակելու հարցում:

Համայնքապետարանի նշված աշխատակիցները, իրենց վերադասին օժանդակելու նպատակով, կազմել և ստորագրել են համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը փաստացի իրենց պատկանելու, սակայն սխալմամբ 2011թ. դեկտեմբերին նույն հողամասերը որպես համայնքային սեփականություն գրանցվելու վերաբերյալ ակնհայտ կեղծ փաստեր հավաստող համաձայնագրեր:

Համայնքի նախկին ղեկավարը «ԲԷՑ» ՓԲԸ-ի կողմից գնման ենթակա 0,166հա մակերեսով տնամերձ հողամասն իր կնոջ, իսկ 0.15հա, 0.137հա, 0.166հա տնամերձ հողամասերը համայնքապետարանի հիշյալ աշխատակիցների ընտանիքի անդամներին պատկանելու վերաբերյալ կազմված համապատասխան կեղծ փաստաթղթերը և իր կողմից ստորագրված՝ նույնաբովանդակ, իրականությանը չհամապատասխանող, կեղծ տեղեկություններ պարունակող գրությունները 2016թ. հուլիսին ներկայացրել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Գեղարքունիքի մարզի տարածքային ստորաբաժանում, որոնց հիման վրա կադաստրի կոմիտեի կողմից գրանցվել է վերը նշված անձանց և նրանց ընտանիքի անդամների սեփականության իրավունքը հիշյալ հողամասերի նկատմամբ:

Այնուհետև՝ համայնքի ղեկավարի խնդրանքով 2016թ. սեպտեմբերին, մի կողմից համայնքապետարանի հիշյալ աշխատակիցների և նրանց ընդանիքի անդամների, ինչպես նաև համայնքի նախկին ղեկավարի և նրա կնոջ, իսկ մյուս կողմից «ԲԷՑ» ՓԲԸ-ի ներկայացուցչի միջև կնքվել են վերոհիշյալ հողամասերն ընդհանուր՝ 14.768.116 ՀՀ դրամով վաճառելու վերաբերյալ պայմանագրեր, իսկ վաճառքից ստացված հասույթը փոխանցվել է համայնքի նախկին ղեկավարին, ինչի հետևանքով Ծակքար համայնքի իրավունքներին և օրինական շահերին անզգուշությամբ պատճառվել է ծանր հետևանքներ առաջացրած էական վնաս:

Ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ՝ համայնքի նախկին ղեկավարին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով և 314-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ համայնքապետարանի երեք աշխատակիցներին՝ 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով և 38-314-րդ հոդվածի 1-ին մասով: Քրեական գործով չորս մեղադրյալների նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է ստորագրություն՝ չհեռանալու մասին:

Համայնքի նախկին ղեկավարի կողմից վերականգնվել է համայնքին պատճառված վնասը:

Նախաքննությունն ավարտվել է, և քրեական գործը, մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել է դատարան:

<https://yerkir.am/news/view/266400.html>

05.04.2022

Արփա-Սևան թունելային ջրատարով Սևանա լիճ է հոսել 23 միլիոն 503 հազար խորանարդ մետր ջուր

2022 թվականի ապրիլի 4-ի դրությամբ Սևանա լիճը ծովի մակերեսույթից գտնվել է 1900 մետր 46 սանտիմետր բարձրության վրա: Ինչպես տեղեկացրին ՀՀ ԱԲՆ «Հայիդրոմետ» ծառայությունից, այն 18 սանտիմետրով շարունակում է զիջել նախորդ տարվա նույն օրվա նիշին, սակայն 8 սանտիմետրով ավելացել է այս տարվա փետրվարի սկզբին գրանցված նիշի համեմատ:

Նույն աղբյուրի համաձայն՝ այս տարվա հունվարից մինչև ապրիլի 4-ն ընկած ժամանակահատվածում Արփա-Մեան թունելային ջրատարով, ներառյալ ստորերկրյա հոսքը, Սևանա լիճ է տեղափոխվել 23 միլիոն 503 խորանարդ մետր ջուր: Սևան թափվող գետերում դիտվել է ջրի էլքերի ավելացում:

Խոսքով Խղաթյան

<https://b24.am/other/313948.html>

01.04.2022

«Զորքերը հայելային հետ քաշելու» Կառավարության առաջարկը կործանարար է Հայաստանի ու Արցախի անվտանգության համար. Թաթոյան

ՀՀ նախկին ՄԻՊ Արման Թաթոյանը ֆեյսբուքյան էջում գրել է. ««Զորքերը հայելային հետ քաշելու» Կառավարության առաջարկը կործանարար է Հայաստանի ու Արցախի անվտանգության համար:

Օրյեկտիվ ապացույցը ադրբեջանական վերջին անօրինական արարքներն ու ներխուժումներն են Արցախում (Փառուխ, Խրամորթ, Քարագլուխ), որոնք «զորքերի հայելային հետքաշման» Կառավարության առաջ բերած գաղափարի արդյունք են:

Այս գաղափարը դատապարտելի կերպով բերվեց հանրային տիրույթ, գովազդվեց և դարձավ արբեջանական շահերին ձեռնտու օրակարգի մաս:

Հետևողականորեն գրոյացվում են մեր գյուղերի մոտից ու համայնքների միջև ճանապարհներից ադրբեջանական զինված ծառայողների հեռացնելու հնարավորությունները՝ անվտանգությունը մարդուց ու նրա իրավունքներից կտրելով և ամեն ինչ մտցնելով ռազմաքաղաքական տանիքի տակ:

Վիճակն ավելի վատացրին ու շարունակում են վատացնել ՀՀ բարձրաստիճան ղեկավար պաշտոնյաներ, որոնք իրենց անպատասխանատու, քաղաքական շահերով պայմանավորված հայտարարություններով ադրբեջանական իշխանություններին տվեցին զորքերն ամրացնելու հիմքեր, սեփական քաղաքական շահերի համար անում են տարածքային իրավագործությունը Ադրբեջանին զիջող պաշտոնական հայտարարություններ՝ անտեսելով Հայաստանի ու Արցախի բնակչության անվտանգությունը, կյանքի և մյուս իրավունքները:

Այս կերպ նաև խոցելի դարձվեցին մեր Ձինված ուժերի, Սահմանապահ զորքերի և մյուս ծառայողների կյանքն ու առողջությունը:

Այսքանից հետո արվում են հայտարարություններ, թե ադրբեջանական զինված ծառայողներին հեռացնելը անիրատեսական խնդիր է ու դա գցում են միջազգային ասպարզեզ:

Զուգահեռ, ադրբեջանական զինված ուժերն անպատժելիության մթնոլորտում շարունակում են հանցավոր արարքները՝ մեր գյուղերի վրա կրակոցներից մինչև հողատարածքների ու տների անօրինական զավթումներ՝ դիտավորությամբ անհնարինության վերածելով մարդկանց կյանքը: Չի նվազել հայաստյացության պետական հովանավորությունը:

Կառավարությունն ինքը խոսափում է հասարակությանը բացատրություններ տալուց. մինչև ո՞ր և որքա՞ն են հետ քաշվելու մեր զորքերը, ի՞նչ նկատի ունեն «զորքեր» ասելով, ու՞մ հույսին են մնալու սահմանային բնակավայրերը, ի՞նչ սկզբունքով է սահմանային բնակավայրերում դիտորդություն իրականացվելու կամ արդյոք իրականացվելու է և այլն: Արդյոք «հայելային հետքաշումը» վերաբերում է միայն ադրբեջանական ներխուժումներին Գեղարքունիքում, Սյունիքում, թե նաև մյուս բնակավայրերին: Եթե վերաբերում է միայն ներխուժումներին, ապա ի՞նչ լուծումներ են լինելու մյուս վայրերում մարդկանց անվտանգության, սեփականության ու այլ իրավունքների համար և այլն: Սա Կառավարության դատապարտելի պահվածք է:

Ընդ որում, անորոշություն է տիրում ոչ միայն Հայաստանում, Արցախում ու Սփյուռքում, այլ նաև միջազգային ասպարեզում:

Ուստի, «զորքերի հայելային հետքաշումը» միայն քաղաքական գաղափար է, զուրկ է մասնագիտական հիմքերից և առկա վիճակում իրական սպառնալիք է մեր Հայրենիքի, մեզնից յուրաքանչյուրի անվտանգության ու կենսական իրավունքների համար»:

<https://yerkir.am/news/view/265928.html>